

ԻՍՐԱՅԷԼ ԱՐԱՑԱԹԸ ԿՈՉԵՑ
ԱՀԱԲԵԿՉՈՒԹԵԱՆ ՀՈՎԱՆԱԲՈՐ. ԻՍՐԱՅԷԼԵԱՆ
ԲԱՆԱԿԻՆ ՀՐԱՍԱՅԼԵՐԸ ՆԵՐԽՈՒԺԵՑԻՆ
ՊԱՂԵՍՏԻՆԵԱՆ ԻՇԽԱՆՈՒԹԵԱՆ ՆԱԽԱԳԱՀԻՆ
ԿԵԴՐՈՆԱՏԵՂԻՆ ՌԱՄԱԼԼԱՅԻ ՄԷՁ

(Լուրը կարդալ էջ 3)

Ն.Ս.Օ.Տ.Տ. ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍԻ Ս. ԶԱՏԿՈՒԱՆ ՊԱՏԳԱՍԸ

ԴԵՊԻ ԱՂԲԻՒՐԸ ԿԵԱՆՔԻՆ

Քրիստոսի Յարուժեամբ օծուն այս հոգեպարար օրերուն զարձեալ մահուան վրայ յաղթանակ տարած կեանքն է քրիստոնեայ մարդուն միտքին ու հոգիին սեւեռակէտը: Քրիստոսի Յարուժեամբ կեանքի գերազույն տօնն է. ան կեանքի փառարանանքն է, այն «կեանքիցն, որ Քրիստոս իր Յարուժեամբ մեզ պարգեւեց» (Շարական):

Արդարեւ, «կեանք»ն է իր բնականական թէ գոյութեանական բոլոր արտայայտութիւններով, իր ներքին թէ արտաքին բոլոր երեւնբերով, իր բանական, ոչ բանական եւ բնութեանական բոլոր տարածքներով, քրիստոնէական հաւատքին առանցքը: Աստուծոյ յայտնութեան խորքը ու նպատակը կեանքն է՝ տիեզերքի ստեղծագործութեան սկսեալ մինչեւ մարդու ստեղծագործութիւնը, մարգարէներէն սկսեալ մինչեւ Աստուծոյ Որդւոյն մարդեղացումը: Քրիստոնէութիւնը կեանքի վրայ խորհրդանշան կրօն մըն է միաստուածեան թէ բազմաստուածեան որեւէ կրօնէ աւելի: Ան է ապէս կեանքի՝ կրօն է: Քրիստոնէութիւնը փրկութեամբական, անդրանցական, էաբանական կամ տեսարանական բոլոր մտեցումները, ինչպէս նաեւ ներկայ աշխարհին գիտական ու ճարտարագիտական բոլոր գիտելիք կ'օգտագործէ, կեանքը գիտելու ու բնութեանը համապարփակ ու ամբողջական հայեցակէտով:

Սակայն ի՞նչ է կեանքը քրիստոնէական իմաստով, ի՞նչպէս պէտք է ապրել գայն:

Կեանքը իր ճշմարիտ էութեամբ ու իմաստով հասկընալու համար պէտք է նայիլ Աստուծոյ մարդեղացեալ Որդւոյն: Արդարեւ, Նոր Կտակարանը, եկեղեցւոյ ազօթքներն ու շարականները, եկեղեցւոյ հայրերու հոգեւոր ու աստուածաբանական գրականութիւնը գ՛րիստոս կը բնութագրեն որպէս «կեանքի Աղբիւր», «կեանքի ճանապարհ», «կեանքի Դուռ», «յաւիտեանական կեանք», «անվախճան կեանք», «կեանքի կրակ», «կեանքի Ջուր»: Այս բոլոր բնորոշումներուն հիմքը կը կազմէ Քրիստոսի խօսքը՝ «Յս նմ' ի մրը» (ՅՎ. 14: 6), «Յս եկայ, որպէսզի կեանք ունենա» (ՅՎ. 10: 10): Քրիստոնեայ մարդուն համար կեանքը իր ամբողջական ու վաւերական իմաստը կը ստանայ, երբ ան զիտուի ու արժեւորուի Քրիստոսի մարդեղութեան, առաքելութեան, փրկագործական խորհուրդի ու Յարուժեան շրջագիծին մէջ: Այս մօտեցումով անհրաժեշտ է հետեւեալ կարեւոր ընդգը-

ծումները կատարել.

Ա.- Կեանքը Աստուծոյ պարգեւն է. կեանքը ինքնագոյ չէ. կեանքի արարիչը Աստուած է: Մենքուր Գիրքը կը հաստատէ, թէ կեանքն առաջ ոչինչ գոյութիւն ունէր, եւ Աստուած «ոչինչէն» ստեղծեց կեանքը: Հետեւաբար Աստուած ոչ թէ կեանքի ձեւաւորիչն է, ինչպէս գիտական որոշ մտեցումներ կը փորձեն հաստատել, այլ՝ կեանքի ստեղծիչը, կեանքի աղբիւրը: Ու կեանքը Աստուծոյ կողմէ տրուած պարգեւ մըն է մարդուն: Անոր տէրը Աստուած ինք է: Մարդը ո՛չ իրաւունք ունի իր կեանքը սեփականացնելու, ո՛չ ալ իրաւունք ունի ուրիշի մը կեանքը իւ-



Իրանցի կամ խրեւոյ ընդի միջոցներով:

ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ
ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԵԼԻԿԻՈՅ

Շար.ը՝ էջ 10

ՍԱ Է ԿԵԱՆՔ՝ ՅՈՅՍ ՅԱՐՈՒԹԵԱՆ

«Ես եմ Յարութիւն եւ կեանք, որ հաւատաց յիս, թէպէտ եւ մեռանի՝ կեցցէ» (Յովհ. 11:25)

Առաջին դարերու եկեղեցւոյ առաջին եւ մեծագոյն տօնը Քրիստոսի յարութեան տօնն էր. ան կախ տօնակալ կարեւորութեան, Քրիստոսի յարութեան առաջին դարու քրիստոնեացեալներուն համար, ի մասնաւորի Քրիստոսի առաքեալներուն համար, մեծ կարեւորութիւն ունէր որպէս ցայտուն եւ մեծագոյն ապացոյցը հոգիի անմահութեան, մահուան վրայ կեանքի յաղթանակի կամ մարդկայնութեան՝ կեանքի վրայ մահուան անգորութեան:

Առաջին եկեղեցին երբ Յուդայի տեղ ուրիշ առաքեալ մը՝ Մատթիան ընտրեց, նպատակն այն էր, որ Մատթիան միացար առաքեալներուն՝ վկայելու Քրիստոսի յարութեան մասին:

Քրիստոսի յարութիւնը առաքեալներուն եւ քրիստոնեացեալներուն համար հատուկ ամբողջութիւնն էր: Ներշնչուի աղբիւր եղած էր, որոնք անկէ քաղելով իրենց ուժն ու կորովը, իսկուհի ու կեցուցանութիւնը, անվարան ու անվախ քարոզեցին Քրիստոսի՝ արհամարհելով իրենց կեանքին սպառնացող ամէն տեսակի վտանգ եւ շարչարանք: Քրիստոս իր երկրաւոր

կեանքին ընթացքին իր առաքեալներուն սորվեցոյց, թէ ինքն է յարութիւնը եւ կեանքը, ու իր կախ տօնակալ կարեւորութեան, Քրիստոսի յարութեան առաջին դարու քրիստոնեացեալներուն համար, մեծ կարեւորութիւն ունէր որպէս ցայտուն եւ մեծագոյն ապացոյցը հոգիի անմահութեան, մահուան վրայ կեանքի յաղթանակի կամ մարդկայնութեան՝ կեանքի վրայ մահուան անգորութեան:

կեանք պարգեւեց:

Քրիստոսի յարութիւնը ապացոյց է կեանքի յաղթանակի մահուան վրայ, եւ կեանքի յաղթանակն ալ ցուցանի է հոգիի անմահութեան:


Քրիստոսն առաջ մարդկային միտքն ու իմաստութիւնը ձգտեցրեց ցանկացեր էր հոգիի անմահութեան: Յուսկան միտքը ընդունած էր,

Աղօթարար՝

ԳԵՂԱՄ ԵՊՍ. ԽԱՉԵՐԵԱՆ
ԱՌԱՋՆՈՐԴ ԼԻԲԱՆԱՆԻ ՀԱՅՈՑ ԹԵՄԻ

Շար.ը՝ էջ 10

«ԱՉԿԱԿ»Ի ՃԱՄԲՈՎ ԴԵՊԻ «ԵՐԿԻՐ»



Երկու օրէ ի վեր «Ալդակ» իր ընթերցողներուն սեփականութիւնը կը դարձնէ, թէ իր այսօրուան թիւին առընթեր անոնց կը տրամադրէ Հ.Յ.Գ. Հայաստանի Գերագոյն Մարմինի պաշտօնաթերթ «Երկիր» շաբաթաթերթի ընթացիկ շաբթուան համարը:

Ճիշդ է որ հայաստանեան լրատուութիւնը մեր ամէնօրեայ սինակներուն մէկ կարեւոր տեղը գրաւած է ու պիտի շարունակէ գրաւել, սակայն տարբեր իմաստ ու տպաւորութիւն կը ձգէ այսօրուան փաստացի իրողութիւնը: Ժամանակակից արեւմտագիտութեան ընձեռած դիրքութիւններու օգտագործումով «Ալդակ» յաջողեցաւ երեւանեան ժամուն հետ քայլ պահելով՝ միեւնոյն օրը եւ միեւնոյն ժամուն հրատարակել «Երկիր»ը, Պուրճ Համուտի «Շաղկոյեան» կեդրոնին մէջ:

Այս իրականութիւնը վստահաբար հայաստանեան լրատուութեան առումով շատ աւելի թարմութիւն, շունչ, մթնոլորտ կրնայ փոխանցել, քան միեւնոյն միջոցները՝ հայաստանեան իրադարձութիւններուն հաղորդ մնալու համար:

Պարզ է անշուշտ, որ այսօրուան հրատարակութիւնը պարագայական նախաձեռնութիւն մը չէ եւ սկզբունքով չի սահմանափակուի այսօրուան համարով միայն: Եթէ կամքէ անկախ պատճառներով որեւէ խանգարում չպատահի, «Երկիր»ը, այսուհետեւ, ամէն Շաբաթ օր պիտի ցուցնուի «Ալդակ»ի Շաբաթ օրուան թիւին հետ:

Կը գիտակցինք, որ ուղղագրութեան հարցը իր անպատեհութիւնները կրնայ ունենալ յատկապէս մեր երիտասարդ ընթերցողներուն վրայ: Սակայն արեւմտագիտութեան այսօրուան կարեւորութիւնները մտածել կու տան, որ վաղը մենք պիտի ունենանք հաւանաբար համակարգչային այն ծրագիրը, որ արեւելեանական ուղղագրութիւնը պիտի վերածէ մեարդեան ուղղագրութեան, որուն գործածութիւնը կը յուսանք, որ ըլլայ ժամանակաւոր, յուսալով որ հայրենի համապատասխան կառոյցները գեղեցիկ օր մը որդեգրեն մեարդեան ուղղագրութիւնը... Մինչ այդ պէտք է օգտուիլ արագ հաղորդակցութեան, համաշխարհայնացման մամուլի վերաբերող միջոցներէն՝ տարածելու համար այգային գաղափարափոխութիւնը եւ պայքարելու՝ համաշխարհայնացման սպառնալից քաղաքականութեան դէմ:

«Ա.»

Շար.ը՝ էջ 2

ԼԱԻԱԳՈՅՆ ՅԱՐՈՒԹԻՒՆ

«... Ոմանք չարչարուեցան եւ չընդունեցին պատուութիւնը, որպէսզի լուսազոյն յարութեան հասնին»

ԵԲՐ. 11:35

Քրիստոս յարեալ ի մեռելոց.
Օրհնեալ է յարութիւնն Քրիստոսի:

Քրիստոնէական մեր հաւատքին աստուածակերտ կառոյցին մէջ հիմնական տեղ ունի այս յայտարարութիւնը: Հիմնական՝ քանի այն ցոյց կու տայ Տէր Յիսուս Քրիստոսի յաղթանակը վերջին թշնամիին՝ մահուան վրայ: Խաչին վրայ Անոր մահով յայտնուած՝ Աստուծոյ փրկարար շնորհքը իր գազաթնակէտին կը հասնի յարութեան յաղթանակով: Յաղթանակ՝ որուն ներշնչած յոյսը կը պորացնէ հաւատացեալը ամենադժուար պայմաններու եւ վիճակներու դիմաց:

Ընդհանուր հասկացողութիւն մը կը պարզանայ թէ՛ մեր վիճակները հետպիտեմէ աւելի կը վատթարանան: Ուր ալ ըլլանք՝ այսօրը կը բաղդատենք նախորդ օրուան հետ եւ պատկերը աւելի մութ կը թուի ըլլալ: Մեր «լուսազոյնը» կ'ընենք մեզ եւ մեր շրջապատը բարեխաղաղութիւնը, սակայն, ամէն դրական բանի դիմաց՝ ծիտական մը կ'աւելնայ: Գիտական յառաջդիմութիւն, տնտեսական կարգադրութիւններ, ապահովական միջոցառումներ իրենց դիմաց ծառայած կը գտնեն նոր հիւանդութիւններ, դժուարութիւններ եւ վտանգներ, որոնք կը սպառնան մարդուն: Եւ այս պարզացող հասկացողութեան հետ կ'աճի յուսահատութեան փրկիտփայլութիւն մը, որուն զլիսաւոր վոզը կ'ըլլան երիտասարդները, որոնք կ'իյնան անհոգութեան եւ նպատակազրկումի թակարդին մէջ: Այսօրուան եւ վաղուան համար անկարող ըլլալու, օգուտ մը չկարենալ ունենալու վախը

ՎԵՐ. ՄԿՐՏԻՉ ՎԱՐԿԵՕՉԵԱՆ
ՆԱԽԱԳԱՀ ՄԵՐՉ. ԱՐԵՒԵԼՔԻ ՀԱՅ
ԱԲԵՏ. ԵԿԵՂԵՅԻՆԵՐՈՒ ՄՈՒԹԵԱՆ

Շար.ը՝ էջ 10

ՉԱՏԿԱԿԱՆ ՊԱՏԳԱՍ

«Ան որ Աստուծմէ ծնած է, աշխարհին կը յաղթէ: Մեր հաւատքն է, որ աշխարհին կը յաղթէ»

(Ա. Յովհ. 5,4)

Քրիստոսի Յարուժեամբ տարուան մեծագոյն տօնն է, որովհետեւ Քրիստոսի Յարուժեամբ մեր հաւատքին հիմքն է: «Եթէ Քրիստոս յարութիւն առած չէ, - կ'ըսէ Ս. Պողոս, - ձեր հաւատքը պարապ է եւ դուր տակաւին ձեր

ՈՒՐԱՅՈՒՄԸ - ՈՐՊԷՍ ՃՇՄԱՐՏՈՒԹԻՒՆ

«Ինչո՞ւ ողջ մարդը կը փնտռէք մեռելներուն մէջ, Հնու չէ, յարեալ...»: (Ղուկաս 24,5)

Անգամ մըն ալ աչքէ անցուցի ինչ որ անհաւատ գիտուններ, պատմագէտներ, իմաստասէրներ - Սթրաուս, Հաւանակ, Յիթչէ, Շէլինկ ու Հեկէլ խորհած ու գրած են Քրիստոսի աստուածութեան եւ յարութեան դէմ:

Աչքէ անցուցի միաժամանակ՝ ինչ որ գրած են աշխարհի ամէնէն անաչառ, ամէնէն անկեղծ, ամէնէն առարկայական պատմագիրները - Մատթէոս, Մարկոս, Ղուկաս, Յովհաննէս, Պետրոս ու Պողոս:

Մնացի ապշած, լուսաւորեալ դարերու ինքնահաւան եւ պարծենկոտ անհաւատները շուրջին խորհուրդ մը, միտք մը, գաղափար մը՝ գոր չգտնենք այն հին հեղինակներուն մօտ:

ՎԱՐԿԱՆ ԵՊՍ. ԱՇԿԱՐԵԱՆ
ՊԱՏՐԵԱՐԲԱՎԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ
ՓՈՒԵՆՆՈՐԴ ԿԱԹՈՂԻԿԵ ՀԱՅՈՅ

Շար.ը՝ էջ 10

մեղքերուն մէջ էք» (Ա. Կորն. 15,17):

Հայ ժողովուրդը Ս. Գրիգոր Լուսաւորչին ի վեր միշտ հաւատացած է Քրիստոսի Յարութեան: Մեր շարականները յաճախակի կ'երգեն Քրիստոսի Յարութիւնը: Այսօրուան ժամանակը կ'ըսէ. «Քրիստոս յարեալ ի մեռելոց, մահուամբ գման կոխեաց, եւ յարութեամբ իւրով մեզ կեանք պարգեւեց»: Այս է մեր հաւատքը:

Իր մահով եւ յարութեամբ Քրիստոս յաղթեց մահուան: Քրիստոս կենդանի է: Քրիստոս մեզի հետ է միշտ, ու մենք, աւելի քան երբեք, իրեն պէտք ունինք: Մահը, որ ամէն մարդ կը վախցնէր, կորսնցուց այլեւս իր խայթը հաւատքին գիմաց: Փաստ՝ մեր հազարաւոր նահատակներ, որոնք չվախցան շարչարանքներէն եւ մահէն եւ մեզի ձգեցին անմոռանալի աւանդ մը եւ անհերքելի ապացոյց մը, թէ հաւատքը մահուանէն աւելի զօրաւոր է: Մէկ հոգի չէ, 10 հոգի չէ, այլ մէկուկէ միլիոն նահատակներու օրինակ ունինք, որոնք հաւատացին, թէ «մահը իմացեալ անմահութիւն է»:

Այո՛, Քրիստոս «յարութեամբ իւրով մեզ կեանք պարգեւեց»: Յաւատեալն է եւ անվերջ կեանք մը պարգեւեց անոնց եւ պիտի պարգեւէ տակաւին բոլոր անոնց, որոնք կը հաւատան իր յարութեան գօրութեան:

Առաքեալներու գործերու ընթերցումին մէջ, կ'իմանանք, որ քրիստոնեաներուն առաջին հասարակութիւնը, որ 120 հոգիէ բաղկացած էր, մտահոգ

ՆԵՐՍԷՍ ՊԵՏՐՈՍ ԺԹ.
ԿԱԹՈՂԻԿՈՍ ՊԱՏՐԵԱՐԲ ՏԱՆՆ
ԿԵԼԻԿԻՈՅ ԿԱԹՈՂԻԿԵ ՀԱՅՈՅ

Շար.ը՝ էջ 2

ՄԱՍԼՈՅ ԱՐՉԱԿՈՒՐԴ

Ս. Չատուրյան տունի առիթով, «ԱՉ-ԴԱԿ» լոյս պիտի չտեսնէ Երկուշաբթի, 1 Ապրիլ 2002ին:
Մեր լաջորդ թիւ՝ Երեքշաբթի, 2 Ապրիլին:

ՔԱԿ ԱՀԱՐԵԿՉԱԿԱՆ ԿՏԱՆԳԱԽՈՐ ԽՄԲԱԿ ՄԸ ԵՂԱԾ Է

Կ'ՐՍԵ Ռ. ՊԱՆՈՒՅԸՐ

Մ. Նահանգներ Հինգշաբթի օր յայտնած են, թէ ՔԱԿ, որուն անունը արտաքին գործոց նախարարութեան ահաբեկչական օտար կազմակերպութիւններու ցանկին վրայ կը գտնուի, չի կրնար փախուստ տալ ամերիկեան պատժամիջոցներէն՝ իր անունը փոխելով:

Արտաքին գործոց նախարարութեան բանբեր՝ Ռիչըրտ Պաուլըր մամլոյ ասուլիսի մը ընթացքին յայտնած է, թէ հարցը անունի չի վերաբերիր, այլ՝ վարչակերպի, աւելցնելով, որ ՔԱԿ «չատ վտանգաւոր ահաբեկչական խմբակ մը եղած է»:

Քիւրտիստանի Աշխատաւորական կուսակցութիւնը յայտարարած է, թէ քրտական ինքնավարութեան մը ինդիո իր գինեակ պայքարէն պիտի հրաժարի՝ քաղաքական քայլերու նախապատուութիւն տալով:

Կարգ մը տեղեկութիւններու համաձայն, խմբակը իր անունը փոխած է դառնալով ժողովուրդին Ազատութեան կուսակցութիւնը:

Թուրքիոյ վարչապետ Պիլիկնիթ էճեւիթ այս շարքի յայտնած է, թէ ՔԱԿ իր անունը փոխած է, որպէսզի «իր իսկական ինքնութիւնը ծածկէ»:

(ՌՈՅԹԸՐԸ)

ԻՍՐԱՅԷԼ ԿԸ ՓՈՐՁԵ ՍՊԱՆՆԵԼ...

Շարունակուած 2րդ էջէն

ուներին համար պայքարող ժողովուրդի մը դէմ մղուող այս պատերազմը պետական ահաբեկչութեան բացայայտ նմուշ մըն է»:

Համաձայն զգուշացուց, որ Իսրայէլի նորագոյն պատերազմին նպատակը կրնայ ըլլալ յաւելեալ պաղեստինցիներու բռնազաղթը, զոր ծրարած է Շարունի կառավարութիւնը եւ նման վտանգաւոր գարգացում պէտք է դիմադրուել միջազգային շտապ քայլերով եւ ճնշումներով՝ սանձելու համար այս վարքաքարձակումը:

«Լիբանան, որուն հողին վրայ գումարուեցաւ արարական վեհաժողովը, միջազգային ընտանիքէն, ՄԱԿէն եւ բոլոր ազգեցիկ պետութիւններէն կը պահանջէ արագ եւ անմիջական շարժում, ճնշում բանեցնելու Իսրայէլի վրայ պաղեստինցիներուն դէմ այս արիւնահեղութեանց վերջ դնելու համար, որովհետեւ այս պատերազմը շարունակելը շրջանը պիտի տանի դէպի վտանգաւոր ուղղութիւն», ըսաւ Համաձայնութիւնը:

Արտաքին գործոց նախարարը հեռաձայնեց իր սուրիացի, եգիպտացի եւ յորդանանցի պաշտօնակիցներ՝ Ֆարուք Շարէհի, Ահմէտ Մահմէտի եւ Մարուան Մուաշարի, ինչպէս նաեւ պաղեստինցի միջազգային գործակցութեան հարցերու նախարար Նապիլ Շաաթի: Համաձայն նաեւ հեռաձայնեց նախագահ զօր. էմիլ Լահուտի, ապա այցելեց վարչապետ Ռաֆիք Հարիրիի:

ԻՍՐԱՅԷԼԵԱՆ ԲԱՆԱԿԻ ԵՐԱՍԱՅԼԵՐԸ ՆԵՐԽՈՒԺԵՑԻՆ ԱՐԱՖԱԹԻ ԿԵԴՐՈՆԱՏԵՂԻՆ

Իսրայէլեան բանակին հրասայլերը երէկ պաշարման օդակի մէջ առին պաղեստինեան իշխանութեան նախագահ Եսսէր Արաֆաթի կեղծոտեցիկները՝ Ռամալլայի մէջ եւ պաշարուեցին կարճ ժամանակ ետք համալիրին պատերը քանդելով՝ խուժեցին անկէ ներս:

Արաֆաթի կեղծոտեցիկները մէջ իսրայէլացի զինուորներ սպաննեցին Արաֆաթի մէջ թիկնապահը եւ վիրաւորեցին աւելի քան 20 ուրիշներ: Արաֆաթի խորհրդական Նապիլ Ապու Ռուտայնա յայտնեց, որ Արաֆաթ կը գտնուի լաւ վիճակի մէջ եւ զբաղած է հեռաձայնային հաղորդակցութիւններով՝ սարքեր ղեկավարներու հետ: Իսկ Մէլուտական Արարիոյ զհատաւոր իշխան Ապուլլա ըսաւ, որ Ռամալլայի շրջանը տուած է ապահովութիւնը, որ Արաֆաթ պիտի չսպաննուի:

Իսրայէլեան ներխուժումէն կարճ ժամանակ ետք, պաղեստինցի կին մը անձնասպանական գործողութիւն մը կատարեց Երուսաղէմի մէջ գերվաճակներու մէջ, սպաննելով երկու հոգի եւ վիրաւորելով առնուազն 20 հոգի:

Ներխուժումէն առաջ Իսրայէլի վարչապետ Արիէլ Շարուն Արաֆաթը կոչած էր թշնամի մը, որ ահաբեկչութիւն կը ղեկավարէ: Ան ըսած էր նաեւ որ Արաֆաթ պիտի մեկուսացուի:

Ներխուժումէն առաջ Իսրայէլի վարչապետ Արիէլ Շարուն Արաֆաթը կոչած էր թշնամի մը, որ ահաբեկչութիւն կը ղեկավարէ: Ան ըսած էր նաեւ որ Արաֆաթ պիտի մեկուսացուի:

ԱՃԽԱՐԻ ԴԵԿԱԿԱՐՆԵՐ ԿՏԱՆՈՒԹԻՒՆ ԿԱՐՏԱՅԱՅԵՆ

Աշխարհի ղեկավարները խոր մտահոգութիւն արտայայտած են երէկ Միջին Արեւելքի մէջ հետզհետէ աւելի վատթարացող կացութեան մասին, իսկ Ռուսիա քննադատած է պաղեստինեան իշխանութեան նախագահ Եսսէր Արաֆաթը մեկուսացնելու Իսրայէլի միջոցառումները:

Ռուսիոյ արտաքին

գործոց նախարար Իկոր Իվանով յայտնած է, թէ Արաֆաթը մեկուսացնելու Իսրայէլի յայտարարած առաջադրութիւնը «այն միջոցը չէ, որ կրնայ նպաստել ներկայ կացութեան քաղաքական լուծում մը գտնելու»:

Ան միջազգային համայնքին կողմէ քայլերու կոչ ուղղած է՝ «կասեցրնելու այս տագնապը, որ վտանգ կը սպառնայ ոչ միայն շրջանային կայունութեան, այլ նաեւ կրնայ շրջանին սահմաններէն անդին անցնել»:

Եւրոպական Միութիւնը վերահաստատած է, թէ Արաֆաթ օրինական իշխանութիւն մը կը մնայ, ինչպէս նաեւ՝ խաղաղութեան հաստատման հարցերով Միութեան «խօսակից»:

Ֆրանսայի արտաքին գործոց նախարար Իւպէր Վետրին քննադատած է Իսրայէլի «Արաֆաթը խեղճամահ ընելու փորձը»:

Միութեան արտաքին քաղաքականութեան պատասխանատու Խաւիէ Մուրան հեռաձայնային հաղորդակցութիւն մը ունեցած է Արաֆաթի եւ Իսրայէլի արտաքին գործոց նախարար Շիմոն Փերէսի հետ՝ կոչ ուղղելով զինադադարը: Ան կոչ ուղղած է նաեւ երկու կողմերուն, որ արարական վեհաժողովին ընթացքին Ս. Արաֆաթի խաղաղութեան առաջարկներուն որդեգրու-

մին ներկայացուցած առիթէն օգտուին:

Եգիպտոսի արտաքին գործոց նախարար Ահմէտ Մահմէտ յայտնած է, թէ պաղեստինցիներու դէմ Իսրայէլի արարքները պատերազմի հռչակում են, մինչ արարքները խաղաղութիւն կ'առաջարկեն:

Չինաստան «լուրջ մտահոգութիւն» արտայայտած է եւ երկու կողմերուն անմիջական զինադադարի կոչ ուղղած:

Արտաքին գործոց նախարարութիւնը «անմիջական քայլերու» կոչ ըրած է՝ միջազգային համայնքին, երկու կողմերը կարելի եղածին չափ շատ բանակցութեանց սեղանին շուրջ բերելու համար:

Փաքիստան յայտնած է, որ Արաֆաթի կեղծոտեցիկները վրայ յարձակումը «լուրջ սպառնալիք է» Միջին Արեւելքի մէջ խաղաղութեան:

Մայիսի, որ յառաջիկայ շաբաթ ահաբեկչութեան մասին խորհրդատու ժողով մը պիտի հարկաւ լայէ, Մ. Նահանգներու կոչ ուղղած է, որ միջամտութիւն կատարուի համար Արաֆաթի կեղծոտեցիկները վրայ Իսրայէլեան յարձակումը:

Միացեալ Նահանգներու արտաքին գործոց նախարար Քոլին Փոուըլը զատապարտեց Միջին Արեւելքի մէջ ահաբեկչական արարքները:

ՊԸՐՐԻ ԸՆԴՈՒՆԵՑ

Շարունակուած 2րդ էջէն

ջամտել, եւ Ֆրանսայի նախագահը խոստացած է ոչ մէկ ճիգ խնայել եւ այս գծով կայուն Միացեալ Նահանգներու նախագահ Ճորժ Պուշի հետ:

Հարիրի Շիրաքի եւ Ասնարի հետ քննարկեց արարական վեհաժողովի արդիւնքներն ու անոր նախաձեռնութիւնը, որուն պատասխանն է Իսրայէլեան յարձակումը:

Շաաթ հանդիպումէն ետք յայտարարեց, որ

պաղեստինցի ժողովուրդը բոլոր միջոցներով պիտի դիմադրէ իր եւ իր ղեկավարին վրայ այս բարբարոս յարձակումին:

Հարիրի երէկ նաեւ ընդունեց Լիբանանի մէջ Միացեալ Նահանգներու դեսպան Վինսընթ Պէթըլը:

Ըստ Հարիրիի մօտիկ աղբիւրներու, վարչապետը դեսպանէն պահանջած է, որ Ուաշինկթըն ճնշում բանեցնէ՝ կացութիւնը հանդարտեցնելու համար:

Հարիրի - Պէթըլ հանդիպումին ներկայ գտնուեցաւ տնտեսութեան նախարար Պասէլ Ֆլէյհան:

Պէթըլ յայտարարեց, որ խաղաղութեան արարական նախաձեռնութիւնը շատ շինիչ է:

Այս նախաձեռնութեան դիմաց Իսրայէլի շղթայագերծած յարձակումին մասին հարցումի մը պատասխանելով, Պէթըլ ըսաւ, որ արարական վեհաժողովի նախաձեռնութիւնը կը հաստատէ, որ վարչապետին ճամբով լուծումի հասնելու փորձերը լուծում չեն:

Ան ըսաւ, որ Միջին Արեւելքի հարցերու ամերիկացի պատուիրակ Անթոնի Չինի պիտի մնայ շրջանին մէջ եւ աշխատանք պիտի տանի գինադու մը հաստատելու համար:

ԱՅՍՕՐ, ԿԵՍ ԳԻՇԵՐԻՆ՝ ԱՍՍՈՆԱՅԻՆ ԺԱՄԱՆԱԿԱՅՈՅՑ

Այսօր՝ Շաբաթ, 30 Մարտի կէս գիշերին կը սկսի կիրարկուիլ ամառնային ժամանակացոյց. հետեւաբար պէտք է ժամացոյցներուն սլաքները մէկ ժամ առաջ տանիլ:

ՀԻՒՍԻՍԱՅԻՆ ՔՈՐԵՍԻՍ ՄԵՉ ԿՈՐԻՉԱՅԻՆ ԿԱՅԱՆ ՄԸ ԿԱՌՈՒՅԵԼՈՒ ՊԵՐՎՈՒՅԵՐ

ՄՈՍԿՈՒԱ - ՈՒԱՇԻՆԿԹԸՆ ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԿՐՆԱՆ ՎԱՏԹԱՐԱՆԱԼ

Ամերիկացի բարձրաստիճան պաշտօնատար մը Հինգշաբթի օր յայտնած է, թէ «չարութեան առանցք»-ի մը մաս կազմող Հիւսիսային Քորէայի համար կորիզային ուժանիւթի գործարան մը կառուցելու Ռուսիոյ մէջ քայլը կառուցելէ ետք այդ առանցքին մէջ այլ երկրին՝ Իրանի համար նման գործարան մը, կրնայ վտանգել Մոսկուայի եւ Ուաշինկթընի միջեւ բարելաւուող յարաբերութիւնները:

Ռուսիոյ կորիզային ուժանիւթի նախարար Ռուստամ Զորեքարթի օր Մոսկուայի մէջ մամլոյ ասուլիսի մը ընթացքին յայտնած է, թէ հակառակ ամերիկեան ընդդիմութեան, Ռուսիա Իրանի մէջ պիտի աւարտէ կորիզային ուժանիւթի գործարանի մը հնոցին կառուցումը:

Ան աւելցուցած է, թէ Մոսկուա կը քննարկէ նաեւ Հիւսիսային Քորէայի կողմէ նման առաջարկ մը:

Օր մը առաջ, ամերիկացի բարձրաստիճան պաշտօնատար մը յայտնած է, թէ մինչ նախագահ Ճորժ Պուշի վարչակարգը մեծ յաջողութիւններ չէ արձանագրած՝ Մոսկուայի համոզելու մէջ, որ վերջ տայ Իրանի կորիզային մարզին մէջ օժանդակութիւններուն, անհաւանակաւ է, որ ասիական վնասէ Ուաշինկթըն - Մոսկուա յարաբերութիւններուն, որոնք մեծ համեմատութեամբ ջնջուած են Նիւ Եորքի եւ Ուաշինկթընի մէջ Սեպտեմբեր 11ի յարձակումներէն ի վեր:

(ՌՈՅԹԸՐԸ)

ՆԱԽԱԳԱՀ ԼԱՀՈՒՏ ԿԸ ԴԱՏԱՊԱՐՏԵ..

Շարունակուած 2րդ էջէն

նոր քարտուղարի ներկայացուցչի, անոնց փոխանցելու, որ Իսրայէլի ոճրային ընթացքը կը սպառնայ շրջանային կայունութեան:

Միւս կողմէ, նախագահ զօր. էմիլ Լահուտ երէկ արարական վեհաժողովի նստաշրջանի նախագահի հանգամանքով հեռաձայնեց պաղեստինեան իշխանութեան նախագահ Եսսէր Արաֆաթի, հետաքրքրուելու անոր պահանջներով:

Նախագահ Լահուտ Արաֆաթի հաւատեց, որ արարական աշխարհը իր պետութիւններով եւ ժողովուրդներով զօրավիգ կը կանգնի անոր եւ խստի կը զատապարտէ Իսրայէլեան յարձակումը:

Ան Արաֆաթի յայտնեց, որ առաւօտէն սկսեալ շտապ հաղորդակցութիւններ կ'ունենայ պետութիւններու եւ միջազգային մարմիններու ղեկավարներուն հետ, պահանջելով անմիջապէս գործնական քայլերու դիմել անձեռն ճամբ Իսրայէլը:

Արաֆաթ շնորհակալութիւն յայտնեց նախագահ Լահուտի, հաւատաւորով, որ պաղեստինցի հաստատ պիտի մնան իրենց կեցուածքին վրայ:

ԶՄՄԱՌՈՒ ՏԻՐԱՄՕՐ ՄԱՅՐԱՎԱՆՔԻ ԺՈՂՈՎՐԴԱՊԵՏՈՒԹԻՒՆԸ

Կը ծանուցանէ ժուճի շրջանի մեր հաւատացեալներուն, թէ

ՍՈՒՐԲ ՅԱՐՈՒԹԵԱՆ ՏՕՆԻՆ ԱՌԻԹՈՎ

Կիրակի, 31 Մարտ 2002, երեկոյեան ժամը 6:00ից, Հայածես Սուրբ պատարագ պիտի մատուցանէ

ԳԵՐԱՊԱՅԾԱՌ ՀԱՅՐ ԵՂԱԿ Թ. Շ. Վ. ԵՂԱՅԵԱՆ

Ժուճի վանքին նախկին ընծայարանից մատարան մէջ, ժուճի հրապարակին մօտ, Զրէյն տպարանից դիմաց:

ԱՉՔԸ ԼՈՅՍ ԳԻՆԻԻ և ԲՈՆԵԱԿԻ ՍԻՐԱՎՈՐՆԵՐՈՒՆ

Հայաստանէն գեղեցիկ գիներով մեր ներածուած, առանց TVA-ի

Շուկայի վրայ է արդէն

Ապակի նոր շիշերով

"Ջերմուկ" Հանքային ջուրը

"ԵՐԵՎԱՆ" պրեմիա 24 տեսակի քոնեակ

3ատուկ նուրբ քոնեակ՝ 1700 ամեակի նուրբութեամբ: Ֆրանս-հայկական արտադրութեամբ եւ յատուկ տուկերով "ԸՆՏԻՐ", "ՅՈՐՃԵԼԵՆԱԿԱՆ", եւ "ՆԱՅԻՐԻ" քոնեակներու ճոխ հաւաքածոյ:

Կրնաք գտնել նաեւ. MAKHLOUF - DORA SUPERMARKET UNIPRIX - ZALKA

17 տեսակ գինի "ՎԵՏԻ ԱԼՔՕ", իր բոլոր տեսակներով, նաեւ՝ 3 լիթրանոց, 1700 ամեակի յուշանուէր "ԽՈՐԱՆ" ("Արեւի" 1990 արտադրութիւն)

Sole Agent: VAK Trd. Co. Distr. Whole sale & retail UNIVERSE Est. Sardarabad Bldg., Armenia Str., Polygarbos Dora, Beirut, Lebanon Tel.: 03/ 626177 - 03/ 773609



ԳՈՐԾԱԾԵՑԷՔ FUEL CARD ՏՆՏԵՍԱԿԱՆ ԾՐԱԳԻՐՆԵՐՈՒ ՅԱԶՈՂՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ

Յաւելեալ մանրամասնութեանց համար հեռաձայնել՝ 01-242556 թիւին:

Գրական Էջ

ԽԱՉԻՆ ԱՆԴԻՆ

«Ես եմ յարութիւն եւ կեանք:
Որ հաւատայ յիս, թէպէտ եւ մեռանի, կեցցէ»:
(Յովհ. 11,25)

Աստուածորդիին ծնունդով վերածնած, Գողգոթայի կատարին Քրիստոսի հետ խաչ բարձրացած եւ խաչէն անդին մահուան վրայ նաեւ իր տարած վերջնական յաղթանակին հրաշափառ խորհուրդը գիրով, երանգով, քարով ու մետաղով փառաբանած մարդը այսօր դարձնել կը հարստանայ յարութեան անմեռ թելադրանքներով եւ հաստատ քայլերով անգամ մը եւս դէպի կեանք կը քայլէ: Մարդեղացեալ Աստուծոյ Քրիստոսի սուրբ արինով ու յարութեան յաղթանակով պայծառակերպուած մարդը, որ նշմարիտ կեանքի յաւերժակարկաչ աղբիւր Քրիստոսի ներկայութեամբ ոչ միայն իր գոյութեան իմաստն ու նպատակը նուաճեց, այլեւ իր հողից կեանքը յաշտեցաւ վերածել «առաւել կեանք»ի, իսկ մահը՝ անմահութեան, խաչէն անդին երկարող յաղթանակին խորհուրդներով գործածած՝ այսօր իր կեանքը կը վերադարձնէ իր կեանքի մասնակից կը դառնայ Քրիստոսի յարութեան:

Այսպէս եղած է մօտեցումը հայ ժողովուրդին՝ հեռաւոր անցալից, նոյն կեցուածքը ցուցաբերած է անտասնամեակներ առաջ Տէր-Ջօրի լայնածիր անապատի մահաշունչ խորշակներուն դիմաց եւ խաչի՝ կեանքին հրամայականներով հատարմօրէն քայլած է հաւաքական գոհաբերութիւններու նախապարհներով եւ յաղթանակած ազգովին: Փաստօրէն, ո՞ր խորհուրդով կարելի է ամբողջականօրէն բացատրել ամբողջական իմաստը վերականխակցեալ Հայաստանի եւ Ար-

ցախեան հրաշամարտին, եթէ ոչ հայ ժողովուրդի էութեան վերանորոգ էութիւնն ու խորհուրդ, նկարագիր ու իմաստ ոգեշնչած քրիստոնէական վաղաճակ հաւատքով եւ գիտակից գոհաբերութեան անդամ ու խոսով: Հայոց պատմութիւնը իմաստաւորած մեր մարտիրոսներուն արեան կանչերով եւ պատգամներով, որոնց շնորհիւ մեր պատմութիւնը իրաւա մը եղաւ ամեցօրեայ գոհողութեանց կենդանի վկայութիւն եւ մարտիրոսներու քանկ արիւնէն բարձրացող յարութեան հրաշքի ուխտ ու գոյութեան կան փիլիսոփայութիւն:

Քրիստոսի օրինակով վաւերական կեանքի նախապարհն ու մակարդակը նուաճած հայ ժողովուրդին համար, այս իսկ պատճառով, Յարութեան տօնը կը զգենու կրկնակ, աւելի ճիշդ՝ *իւրաքանչիւր նշանակութիւն*: Եւ հաւատքի ու յաղթանակի այս ամբողջութիւնը իր իսկ վրայ յաւերժական կեանքի կառուցման մեր ժողովուրդը «մահուամբ զմահ կոխեց», երբ ջարդն ու աղետը շրջապատած էին մութ ու մռայլ նախապարհը մեր պատմութեան, անհաւատալի ծառայումով մը շախչախեց ամէն շարիք ու Գողգոթա, որովհետեւ, դարեր շարունակ, մեր ողջ պատմութեան ընթացքին, խաչէն անդին դէպի երկինք ու կեանք երկարող քրիստոնէութիւնը հայ ժողովուրդին համար եղաւ գոյութեան անխախտ կողմնակց, ստեղծագործութեան աղբիւր յաւերժակարկաչ եւ անմահութեան նախապարհ լուսափայլ...

Ս. ԿԻՐԱՎՈՍԵԱՆ

ՀՈՎՈՒՄԱԿԱՆ ՍՐԻՆՉ

ԽԱՉԸ

Թէ պաշտումի թափն ունենաս՝
Տէրն ւրոյց մը թէ քեզի կու տայ,
Որպէսզի իր Ուժը անհաս
Սաւառնացնես երկրի վրայ:

Թէ տեսիլներ ունենաս դուն՝
Յայտնութիւն մ'ալ քեզի կու տայ,
Որպէսզի իր Կամքը արթուն
Հանդիսացնես երկրի վրայ:

Թէ բարձունքէ մ'իսուսի իր հետ՝
Ինքը քեզի շէշտ մը կու տայ,
Որպէսզի իր Խօսքը յաւէտ
Արձագանգես երկրի վրայ:

Թէ վերացած յառիս իրեն՝
Հո՛ւր լեզու մ'ալ քեզի կու տայ,
Որպէսզի իր Կայծը վերէն
Սահեցընես երկրի վրայ:

Եթէ մըտնես իր ամպին մէջ՝
Ինքը քեզի շանթ մը կու տայ,
Որպէսզի իր Վրէժը անշէջ
Փայտակէս երկրի վրայ:

Իսկ իր լոյսին թէ երթաս մօտ՝
Ինքը քեզի ջահ մը կու տայ,
Որպէսզի իր Փառքն անաղօտ
Վարդավառես երկրի վրայ:

Եթէ նետուիս իր գիրկն անուշ՝
Ինքը քեզի երգ մը կու տայ,
Որպէսզի իր Շնորհն երկնայուշ
Թըրթոսացընես երկրի վրայ:

Թէ համբարուիս հետ իր վերջին՝
Ինքը քեզի կեանք մը կու տայ,
Որպէսզի իր Շունչը անգին
Ոգեւորես երկրի վրայ:

Իսկ թէ թաղուիս իր շուքին տակ՝
Ինքը քեզի շող մը կու տայ,
Ոչինչին դէմ յոյսին անփակ
Ճառագայ՛թը երկրի վրայ:

Ու այդ Ուժը, այդ Կամքն ու Խօսք,
Այդ Կայծն ու Վրէժ, այդ Փառքը սուկ,
Այդ Շնորհն ու Շունչ, այդ Յոյսն համայն
Քեզի տրուած ԽԱՉն է միայն:

ԵՂԻՇԷ ԱՐՔ. ԳՈՒՐԵԱՆ

Չ Ա Տ Ի Կ

Մաղկազարդէն ետք, մեր գանգակը շատախօս կը դառնայ, գինով բերնի մը պէս իր կուն-առտու երկայն-երկայն պոռալով: Գեղէն դուրս, բանուորները, ծնօտնիկ տուած բահին կոթին, կը նային գուարթ, ժամուն գին, որուն բարի գանգակատունը, սո՛ւր կը ցցուի տուններուն մշուշաւոր դալկութեանը վերեւ, կարծես անոնց թանձրացեալ երգը ըլլար, միջոցն ի վեր:

Աւագ շաբաթը ժամուն շաբաթն է ու մեր կիներն ու աղջիկները փոխն ի փոխ, պարտէզներէն կամ ժամէն քաշուած՝ կը քալեն տօնական երջանկութեամբ մը, որ մինչեւ իսկ մեծերուն վրայ կը յամառի յայտնուելու:

Բայց ձեզի պատահած է, կէս լուսնկայի մը տակ, որ փողոցներուն մէջտեղը կ'իյնայ տոգոյն ժապաւէնի մը նման, քայլ խումբով, քայլ անաղմուկ, կողքիդ ունենալով մանրիկ աղջիկներ կամ ոտքերը կապուած պառաւ մը, դէպի ժամը, արշալոյսէն շատ առաջ:

Այն ատեն է, որ կոչնակին վաղազարթ երգին հետ գերեզմաններուն մէջ քարերը թուղթի կտորուանքներու պէս կը ծալուին իրենք իրենց վրայ ու մեռելները ակնաջ կու տան մեծ կոչին, որ կ'ուշանայ, կ'ուշանայ:

Մենք եկեղեցի կ'երթանք, գերեզմանին հեռաւոր մեռելներուն տուած մեր միտքը:

Ու տունները կը պարպուին: Մեծ լուսնեան մէջ ղուռները մութը կը յարեն կամաց, հեծկտանքի մը մէջ դառնալով իրենց ծինիներուն վրայ ու փողոցէն կ'առաջանայ խումբը ժամուորներուն:

Տարուան մէջ երկուք չի կրնար ըլլալ Չատիկին առջի առտուն: Տարուան մէջ ժամը չի յիշեր այնքան լոյս ու կրակ, խունկ ու աղօթք, որքան այդ առտուն:


Չատիկը գիւղէն դուրս է մանաւանդ:
Բոլոր բլուրներուն վրայ կանանչը կը խաղայ,
Թարմ, աղուոր, ա՛յնքան՝ որ չես կշտանար նայելն:
Անտառներէն ներս, ծառերուն պտուկները կը թեւաւորին,
փայլելու պատրաստ մեղուններու նման ու անոնց ոտքին առջի ծաղիկները կը սպասեն անթարթ՝ չեկող ձեռքերուն:

Ու խայտա՛ւր բոլոր ջուրերուն: Ու պոռա՛ւր բոլոր առտուններուն, լեռներու կողերէն, փրփուրով ու երգով, կոտորած անձրեւի մը պէս կախուելով ձորերէն վար: Ու գուարթութիւնն, պճըլտիւնը կանգուն ու ծալուած բոլոր աղբիւրներուն:

Մեր Չատիկը մեր գարունն է, հարուստ, տաքուկ պատսպարուած անկիւնի գարունն մը, որ կը վախնայ շատ բարձրերը թափառելէ, ձիւներուն անաղարտ գարգամանակին մօտիկ: Բայց անիկա սիրող աղջկան մը պէս անուշ է գեղէն վար, դէպի լիճք տանող ճերմակ ճամբաներու երկայնքին, ուր, իր գոյններուն ու հոտերուն բոլոր բաշխումներովը աւարտած, բարի արեւին հետ կը փռուի, մինակ, սպասելով աղջիկներուն կամ գառներուն:

Ու մեր գարունը գինովցնող համեր ունի մեր ձիւթնի պարտէզներէն ներս, որոնք գեղէն կը սկսին բլուրէ բլուր, իրենց խաղաղ թաւալումովը դաշտ իջնալու:

Չատիկը լիճինն է, մանաւանդ՝ որ իր մոխրագոյն երեսն կը վանէ ձմեռուան բոլոր տրտմութիւնները ու կը կապուտանայ, կը կապուտանայ, ա՛յնքան՝ որ տղաքը կը խենթանան անոր նայելով ու նայելով:



Մեր Չատիկը:
Ես քեզ պիտի ուզէի, անծանօթ հորիզոնի մը տակ, հոյակապ լեռան մը կոնածեւ ստուերին մէջ, յալապէս նոր ու խռովիչ հովին տակ մեր երեք գոյներուն: Ես քեզ պիտի ուզէի նորէն գիւղի մը կոնուտին, աղբիւրի մը բերնին, ջուրի մը փոխին, հին եկեղեցիի մը անցեալին ծոցը, ուր մեր նախնիքներուն աւաչներէն բառի քուղեր կախ կը մնան աւիքներէն:

Ես քեզ ուզէի պիտի, մեր վիրաւոր, կրկնապէս կարմիր Չատիկը, քեզ նորէն, այն երկրին մէջ, որուն երգով պատմուեցան միլիոնները մեր ցեղին գաւաչներուն, նոր Յարութեան քու հսկայ շեփերովդ:

Ու դուն պոռայիր, պոռայիր բոլոր հորիզոններուն մեծ աւետիսը մեր նոր Արքայութեան:

Ու այն ատեն, Ովսանա՛ք քեզի, ի մեռելոց Յարութեան:

վրայով, կը բաւէ անոնց լման տարուան մը համար: Աւանդութիւնը կը լուէ այդ օրուան համար: Յայտնի, անստուեր օրն է ան: Բոլոր սուրբերը ու բոլոր ոգիները կը ծալեն ձեռքերնին, գիտելու համար երկինքներուն անբաւութիւնը խորէն, յարուցեալին փառքը դամբաններէն դուրս:

Ու օրը ծանր կ'իրակի է: Գեղացին միշտ վախցած է գայն աւրելու:

Օրը կ'իրակի է նոյնիսկ քոքուրներուն, որոնք կը ձգեն անտառէն ներս, իրենց նոր կահաւորած անձաւները, ու տրտմութեամբ կ'իջնան գեղը շրջանակող բլուրներուն ամէնէն ցածին: Այդ գիւղութիւնը, որ ժամունն է, կը բերէ գանոնք տղոց հաւաքատեղիէն բաւական վեր:

Ու անոնք կարօտով, գրեթէ լալով կը կախեն իրենց նայուածքին թելերը դարձող աղջիկներուն, անբարբառ, միասնական լարումով մը: Ու անոնց ծեր տղու սիրտէն ինչե՛ր, ինչե՛ր կը փրթին:

Մեր Չատիկը:
Արցունքով կու գամ ես քեզի, ո՛վ իմ գեղիս անման, անուշիկ տաղաւար:

Դուն հիմա չունիս քու մեծ աւետաւորը, շատախօս գանգակը, որ ով գիտէ ո՞ր օտար աշխարհին մէջ, ո՞ր ամբարիշտ մատներուն մղումովը՝ քանի՛-քանի՛ մահներուն արիւնովը կը տքայ շղթայուած:

Քեզի կը պակսին կակաչի պէս աղջիկները ու մանուշակէ նայուածքով հարսները: Քեզի կը պակսին պարմանութիւնը պարողներուն ու մատղաշ հունձքը մեր երիտասարդներուն, անլուր փոռներուն վրայ իրենց մեծ քունովը անշարժացած:

Ու, մանաւանդ՝ քեզի կը պակսի քու եկեղեցիդ, քու մեծ, ոսկիով թաթխուած եկեղեցիդ, ուր կը մըտնէիր, արշալոյսէն առաջ, ստուերի մը պէս մերկ ու միտակ եւ ուր հազար ու հազար կանթեղներուն բռնկած աչքերը, հազար-հազար մոմերուն աղբրաբար կու լեզուները կը հիւսէին քու փառքը, քու շքեղութիւնը ու անհաւասարեղի վայելչութիւնը:

Քեզի կը պակսին խորաններու երկիւղած սրբութիւնը, որ լոյսերուն թելին վրայէն, համբոյրի մը պէս կու գար ինչալու աղօթող քու գաւաչներուդ հոգիէն ներս ու կը բանար հոն գրկանքի, տառապանքի սկերուն դէմ մեծ յոյսին չմեռնող աղբիւրը:

Ու քու տաճարդ հիմա չունի իր տէրտէրը, ու քու գանձարանդ հիմա մերկացած է իր պատերը հիւսող քարերէն անգամ:

Դուն, հիմա աղբաւտ մե՛ր Չատիկը:
Դուն տխուր ես դարձեալ, գեղէն ալ դուրս, ուր բլուրներուն վրայէն ծառերը կտրատուեցան իրենց ճիւղերէն եւ իրենց չոր կմախքները կը շարեն, մեծ մեռելներու նման, իրարու ետեւէ:

Դուն կու լաս, մանաւանդ՝ երբ ոտք կը նետես մեր պարտէզներէն ներս, մեր ձիւթնի մշտական հարսնութեամբը նշանաւոր պարտէզներէն:

Դուն կու լաս անոնց ղիտակներուն վրայ, անի-մանալի վայրագութեամբ մը ինկած հող, յաւէտ բարբարոս ձեռքերէ:

Ու դուն, շքեղ ու լայն ու բարի տուններուն տեղ, ուրկէ ներս օրհնութեամբ, առատութեամբ, գաւաչով ու թոռներով, գառներով եւ ուլերով կը մտնէիր, հիմա կը գանես փակուած ու խանձուած պատերուն սուգը միայն, որ օր օրի կը կբի դէպի գետին, թաղելու համար իր մոխրիկն տակ կեանքի այն մեծ հնցը, որ մեր գիւղը եղաւ:

Մեր Չատիկը:
Ես քեզ պիտի ուզէի, անծանօթ հորիզոնի մը տակ, հոյակապ լեռան մը կոնածեւ ստուերին մէջ, յալապէս նոր ու խռովիչ հովին տակ մեր երեք գոյներուն: Ես քեզ պիտի ուզէի նորէն գիւղի մը կոնուտին, աղբիւրի մը բերնին, ջուրի մը փոխին, հին եկեղեցիի մը անցեալին ծոցը, ուր մեր նախնիքներուն աւաչներէն բառի քուղեր կախ կը մնան աւիքներէն:

Ես քեզ ուզէի պիտի, մեր վիրաւոր, կրկնապէս կարմիր Չատիկը, քեզ նորէն, այն երկրին մէջ, որուն երգով պատմուեցան միլիոնները մեր ցեղին գաւաչներուն, նոր Յարութեան քու հսկայ շեփերովդ:

Ու դուն պոռայիր, պոռայիր բոլոր հորիզոններուն մեծ աւետիսը մեր նոր Արքայութեան:

Ու այն ատեն, Ովսանա՛ք քեզի, ի մեռելոց Յարութեան:

ՅԱՎՈՒ ՕՇԱԿԱՆ

ՏԵՂԵԿԱՏՈՒԱԿԱՆ ԱՐՏԵՍՏԱԳԻՏՈՒԹԻՒՆ


ՀԱՄԱԿԱՐԳԻՉ

ՀԱՄԱՑԱՆՑ

ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ԱՇԽԱՐՀ



ՀԱՅԿԱԿԱՆ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ԹԱՆԳԱՐԱՆ-ՀԻՄՆԱՐԿԻՆ ԿԱՅՔԸ




1995ին հիմնուած Հայկական Յեղասպանութեան Թանգարան-հիմնարկը, որ կը գտնուի Երեւանի մէջ (Միջեռնակաբերդ), կ'ընդգրկէ Հայկական Յեղասպանութիւնը ներկայացնող պատմական-արխիւային նիւթեր, լուսանկարներ եւ փաստաթուղթեր:

Թանգարան-հիմնարկը օժտուած է նաեւ Համացանցի կայքով մը (www.armenocide.am), ուր հիմնարկի գործունէութեան կողքին կը ներկայացուին Հայկական Յեղասպանութեան մասին նիւթեր, 1875-1923 տարիներուն ընթացքին հայերու իրավիճակը ներկայացնող շահեկան ժամանակագրութիւն մը, Հայկական Յեղասպանութեան մասին երեւելի անձնաւորութիւններու վկայութիւններ, լուսանկարներ եւ կապերու բաժին մը:

ՀԱՅ ԴԱՏ ԵՒ ՀԱՄԱՑԱՆՑ

ՀԱՅԿԱԿԱՆ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ԶԱՆԱԶՄԱՆ ԱՐՇԱԻ



Հայկական Յեղասպանութեան նուիրուած արխիւային նիւթեր, ուսումնասիրութիւններ եւ յօդուածներ պարունակող www.genocide1915.info հասցեով Համացանցի կայքը այս օրերուն նախաձեռնած է ստորագրութիւններու հաւաքման արշաւի մը:

Հայկական Յեղասպանութեան ճանաչման նուիրուած այս արշաւին մասնակցելու համար պէտք է այցելել վերոնշեալ կայքը եւ «ըլիք» ընել «sign the petition» բաժինը:

Նշենք, որ կարճ ժամանակի մը մէջ արդէն 17,500 հայ եւ օտար անձեր, աշխարհի բոլոր կողմերէն, Հայկական Յեղասպանութեան ճանաչման իրենց գորակցութիւնը յայտնած են՝ իրենց անունը արձանագրելով կայքին «sign the petition» բաժինին մէջ:

ՀՐԱՇՎՓԱՆ Ս. ՅԱՐՈՒԹԵԱՆ ՏՕՆԻՆ ԱՌԻԹՈՎ ՀԱՆԳԻՍԱՒՈՐ Ս. ՊԱՏԱՐԱԳ ՍՐՔՈՑ ԲԱՆԱՍՆԵՅ ՄԱՆԿԱՆՅ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՄԷԶ

Կիրակի, 31 Մարտ 2002ին, Ս. Զատկուան տօնին առիթով պիտի պատարագէ եւ յաւուր պատշաճ քարոզ:

ԳԵՐՊ. Տ. ՆՈՐԱՅՐ Ծ. ՎՐԴ. ԱՇԸԳԵԱՆ

Երգեցողութիւնը պիտի կատարուի Եկեղեցու յարաց Դասի «ՆԱՐԵԱԿՅԻ» երգչախումբին կողմէ, ԵԿԱՒԵԱՆ քառաձայն եղանակով, խմբավարութեամբ ՊՐՆ. ԳԵՆՐԳ ՊԵՊԵՃԵԱՆԻ:


Սկիզբ ժամերգութեան ժամը 7:00ին
Ս. պատարագ ժամը 9:00ին
Զարոյթ ժամը 10:00ին

Սիրով կը հրաւիրենք հաւատացեալ ժողովուրդը՝ ներկայ գտնուելու եւ հաղորդուելու սոյն հոգեպարար արարողութեամբ:

ՍՐՔՈՑ ԲԱՆԱՍՆԵՅ ՄԱՆԿԱՆՅ ԵԿԵՂԵՑԻՈՅ ԹԱՆԱԿԱՆՈՒԹԻՒՆ

«ԻՆՍԹՐՆԹ ՄԵՍԷՃԻՆԿ» ՀԱՄԱՑԱՆՑՈՎ ԶՐՈՅՑԻ ԴՐՈՒԹԵԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ

Համացանցը միանգամայն արագորակացրեց ինտերնետի աշխարհը: Ե - նամակի դրուծիւնը եկաւ վերարժեւորելու հաղորդակցութեան ելեկտրոնային միջոցները եւ Համակարգիչի հաստիքիւն ունեցողներուն տուած երկվայրկեանի մը մէջ աշխարհի որեւէ անկիւնը գրուծիւններ ուղարկելու կարելիութիւնը: Այսօր ուսումնասիրութիւնները ցոյց կու տան, որ օրական բազմաթիւն ե - նամակներ կ'ուղարկուին եւ «ելեկտրոնային»



www.mirc.com): «Ինսթրնթ մեսէճիւնկ» դրուծիւնը, որ գրոյցի աւելի զարգացած ձեւ մըն է, կարելի է նկատել «գրոյցի սենեակ» մը, ուր միայն երկու հոգի կը գրուցէ:

1996ի Նոյեմբերին Համացանցին վրայ տեղադրուեցաւ «Միրայիլիս» ընկերութեան արտադրած «ինսթրնթ մեսէճիւնկ» ի առաջին ծրագրի: ICQ, որ ցարդ ամէնէն աւելի ժողովրդական դրուծիւն վարչիւն է (ICQ) կարելի է

գտաւ, երբ շրջանառութեան մէջ դրուեցան «Եհաու մեսենճըր» եւ «Մայքրոսոֆթ» ընկերութեան արտադրած «msn messenger» ծրագրերը:

Նկատի առնելով, որ այսօր Համացանցի գրոյցի դրուծիւնը օգտագործողներ միաժամանակ կ'օգտագործեն «ինսթրնթ մեսէճիւնկ» մէկէ աւելի ծրագրեր, վերջերս Հայաստանի յատուկ դրուծիւններ, որոնք «ինսթրնթ մեսէճիւնկ» ի հանրածանօթ բոլոր դրուծիւնները կը միացնեն մէկ ծրագրի մը մէջ: Այս ծրագրիւններուն շարքին են՝ «Թրիլլըն», «Օտիկո» եւ «Օմնի»:

արձանագրել ձրիօրէն, այցելելով www.icq.com կայքը):

Միլիոնաւոր բաժնորդներ ունեցող ICQ խարճի մը մէջ, երբեմն է - նամակը նոյնիսկ հաղորդակցելու համեմատաբար «դանդաղ» միջոց կը նկատուի, որովհետեւ է - նամակ մը կարողաւ, պատասխանելու եւ ուղարկելը որոշ ժամանակ կը խլէ: Ահա թէ ինչո՞ւ լայն տարածում գտած է այլ դրուծիւն մը, որ Համացանցային գրոյցի (chat) «ինսթրնթ մեսէճիւնկ» դրուծիւնն է:

«Թրիլլըն» ծրագրերը կը միացնէ «ինսթրնթ մեսէճիւնկ» հինգ ծրագրերը՝ IRC, AIM, ICQ, MSN messenger եւ Yahoo messenger:

2,2 միլիարդ ծաւալով այս ծրագրերը կարելի է արձանագրել www.trillian.cc հասցեով կայքը: Նշենք, որ ծրագրիւն նորագոյն տարբերակը «Թրիլլըն 0,725» արձանագրութիւններու www.download.com կայքէջն ցարդ արձանագրուած է շուրջ 2,300,000 անձերու կողմէ:

«Թրիլլըն» իտալական ծրագրի մըն է աշխարհի մը համար, ուր մարդիկ հետզհետէ իրենց շրջապատը եւ զրացիները կը փոխարինեն «ելեկտրոնային» ծանօթներու շրջանակով...:

դրուծիւնը 1998էն ի վեր կը պատկանի ելեկտրոնային հաղորդակցութեան AOL ընկերութեան:

«Ինսթրնթ մեսէճիւնկ» ընկերութեան մէջ ICQի մենատիրութիւնը վերջ

«Թրիլլըն» իտալական ծրագրի մըն է աշխարհի մը համար, ուր մարդիկ հետզհետէ իրենց շրջապատը եւ զրացիները կը փոխարինեն «ելեկտրոնային» ծանօթներու շրջանակով...:


ԵԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՏԱՐԱԶՆԵՐ ՖՈՒԹՊՈԼԻՍՏՆԵՐՈՒ ՀԱՄԱՐ

«Ֆիլիպս» եւ «Նայթի» ընկերութիւնները համագործակցաբար շուտով հրապարակ պիտի իջեցնեն Ելեկտրոնային թելեբոլ եւ թեթեւ սարքերով օժտուած մարզական տարագներ, որոնք Ելեկտրոնային բարակ թելերու եւ «չիֆ» երու շնորհիւ ֆուլպոլիստ մը շարժումներու եւ զնգակի հարուածներուն մասին տեղեկութիւններ կը փոխանցէ մարզիչին մօտ գտնուող սարքի մը, եւ մարզիչը իր կարգին, մարզիկին օձիքին վրայ տեղադրուած սաքքով մը ցուցմունքներ կը փոխանցէ անոր...:

«ԱՉԴԱԿ» Ի ՀԵՌԱԶԱՅՆԻ ԹԻԻԵՐԸ

«ԱՉԴԱԿ»-ի հետ կապուելու համար հեռաձայնել հետեւեալ թիւերուն: -258526, 260115 եւ 241274:

«ՀԱՇՄԵՅԼ» ԾԱԾԿԱԳՐՈՒԱԾ Ե-ՆԱՄԱԿՆԵՐՈՒ ԱՌԱՔՈՒՄԻ ԴՐՈՒԹԻՒՆԸ



Համացանցի ե-նամակի դրուծիւնները օգտագործողներ, ըստ մասնագէտներու, կրնան «հեքքը» ներու գոհ դառնալ: Այսպէս, Համացանցի «ծովահէններ» կրնան առաջուած որեւէ ե-նամակ ձեռք անցնել՝ օգտագործելով յատուկ ծրագրեր: Հետեւաբար անձնական ե-նամակներու փոխանակումի պարագային յանձնարարելի է ծածկագրուած կարելիութիւն ընձեռող ե-նամակի դրուծիւններու օգտագործումը:

- Ստորեւ կը ներկայացնենք «Հաշմէյլ» դրուծեամբ ծածկագրուած ե-նամակներ ուղարկելու ձեւը:
- 1- Այցելել Համացանցի www.hushmail.com եւ «ըլիք» ընել «sign up» կոճակը: Կարողաւ բաժանորդագրութեան պայմանները եւ «ըլիք» ընել «yes»:
